

« 23 » մայիս 2019 թ No 1308 – Լ

«ԱՍՏՐԱԴԵԶ-ՕՊ» ՄԱՇԿԱՅԻՆ ՀԱԿԱՆԵԽԻՉ ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ
ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Աստրադեզ-ՕՊ» մաշկային հականեխիչ ախտահանիչ միջոցի կիրառման հրահանգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

ՀՐԱՀԱՆԳ

«ԱՍՏՐԱԴԵԶ-ՕՊ» ՄԱՇԿԱՅԻՆ ՀԱԿԱՆԵՒԻՉ ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Աստրադեզ-ՕՊ» մաշկային հականեխիչ ախտահանիչ միջոցը (այսուհետ՝ միջոց) իրենից ներկայացնում է օգտագործման համար պատրաստ մաշկային հականեխիչ՝ յուրահատուկ հոտով կարմրա-նարնջագույն թափանցիկ հեղուկի տեսքով:
2. Որպես ազդող նյութ՝ պարունակում է. իզոպրոպիլային սպիրտ (պրոպանոլ-2)՝ $69,0 \pm 2,0\%$, դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ՝ $0,22 \pm 0,02\%$, ինչպես նաև ֆունկցիոնալ հավելումներ, այդ թվում՝ սննդային ներկանյութեր:
3. Միջոցը թողարկվում է 0,1, 0,5, 1,0 դմ³ տարողությամբ պլաստիկ սրվակներով:
4. Միջոցի պիտանելիության ժամկետը 3 տարի է՝ արտադրողի փակ փաթեթավորմամբ:
5. Միջոցը պահվում է արտադրողի փակ փաթեթավորմամբ՝ համաձայն դյուրավառ հեղուկների պահման պայմանների՝ $+5^{\circ}\text{C}$ -ից մինչև $+30^{\circ}\text{C}$ ջերմաստիճանում:
6. Միջոցն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների (այդ թվում՝ տուբերկուլոզի միկոբակտերիաների), վիրուսասպան ակտիվությամբ ընդերային և արտաընդերային հեպատիտների (այդ թվում՝ հեպատիտներ Ա-ի, Բ-ի, Ց-ի), ՄԻԱՎ-վարակի, պոլիոմիելիտի, ադենովիրուսների, էնտերովիրուսների, ռոտավիրուսների, SARS վիրուսների, H5N1

գրիպի, A/H1N1 գրիպի, մարդու սեզոնային գրիպի, հերպեսի վիրուսների նկատմամբ, սնկասպան ակտիվությամբ կանդիդոզ և տրիխոֆիտիա հարուցող ախտածին սնկերի նկատմամբ: Միջոցն օժտված է երկարացված մանրէասպան ակտիվությամբ 3 ժամվա ընթացքում:

7. Օգտագործման ժամանակ միջոցն ինտենսիվ գունավորում է մաշկը և հստակ նշում է մշակմանը ենթակա մաշկի հատվածի սահմանները:

8. Միջոցն օժտված է մաշկը փափկացնող և խոնավեցնող հատկություններով:

9. Միջոցն ըստ սուր թունավորության չափանիշների, ստամոքսի մեջ և մաշկի վրա լցվելիս, համաձային ԳՕՍՏ 12.1.007-76 –ի պատկանում է քիչ վտանգավոր նյութերի 4-րդ դասին: Կիրառման առաջարկվող ռեժիմների ժամանակ չի ցուցաբերում տեղային գրգռող, մաշկային-ռեզորբտիվ և գերզգայունացնող հատկություններ: Կիրառման ռեժիմներում ներշնչական (ինհալյացիոն) վտանգավորությունը քիչ հավանական է:

10. Սահմանային թույլատրելի խտությունը (ՄԹԽ) աշխատանքային գոտու օդում.

1) դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ՝ 1 մգ/մ³ (վտանգավորության 2-րդ դաս),

2) իզոպրոպիլային սպիրտի (պրոպանոլ-2) համար՝ 10 մգ/մ³ (վտանգավորության 3-րդ դաս):

11. Միջոցը նախատեսված է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (այսուհետ՝ ԲԿ) (այդ թվում՝ արյան փոխներարկման կայաններում, շտապ բուժօգնության կայաններում և մեքենաներում), սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններում, հոսպիսներում և այլն.

1) վիրահատական և ներարկման դաշտերի մշակման համար,

2) դոնորների արմնկային ծալքի մշակման համար,

3) կաթետերների տեղադրումից և հողերի պունկցիայից առաջ մաշկի մշակման համար:

12. Միջոցն իրենից ներկայացնում է օգտագործման համար պատրաստ միջոց և օգտագործումից առաջ ենթակա չէ նոսրացման:

2. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

13. **Հիվանդների վիրահատական դաշտի մաշկի, կաթետերների տեղադրումից և հողերի պունկցիայից առաջ մաշկի մշակում.** իրականացվում է միջոցով առատորեն թրջված առանձին մանրէազերծ խծուծներով մաշկի կրկնակի շփման եղանակով: Միջոցով մշակումից հետո պահաժամը 2 րոպե է: Վիրահատության նախօրեին հիվանդն ընդունում է ցնցուղ (լոգանք), փոխում սպիտակեղենը:

14. **Դոնորների արմնկային ծալքի մաշկի մշակում.** իրականացվում է միջոցով առատորեն թրջված առանձին մանրէազերծ խծուծով մաշկի կրկնակի շփման եղանակով: Միջոցով մշակումից հետո պահաժամը 2 րոպե է (կամ մինչև միջոցի վերջնական չորանալը մաշկի վրա):

15. **Ներարկման դաշտի մաշկի մշակում.** իրականացվում է միջոցով առատորեն թրջված մանրէազերծ խծուծով մաշկի միանվագ շփման եղանակով: Միջոցով մշակումից հետո պահաժամը 1 րոպե է:

3. ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

16. Կիրառել միայն արտաքին օգտագործման համար: Չօգտագործել ներքին ընդունման համար:

17. Չքսել վերքերի և լորձաթաղանթների վրա:

18. Խուսափել միջոցն աչքերի մեջ լցվելուց:

19. Դյուրավառ է: Չծխել: Չթույլատրել շփում բաց կրակի և միացրած տաքացուցիչ սարքերի հետ:

20. Միջոցը պահել սերտ փակված սրվակների մեջ՝ դեղամիջոցներից առանձին, երեխաների համար անհասանելի տեղերում:

21. Պիտանելիության ժամկետն անցնելուց հետո միջոցի օգտագործումն արգելվում է:

22. Չնոսրացված վիճակում չլցնել կոյուղի և ձկնատնտեսական ջրամբարներ:

23. Միջոցի մեծ քանակության թափվելու դեպքում վրան լցվում է ավագ կամ հող, որից հետո հավաքվում տարայի մեջ՝ հետագա օգտահանման համար: Չօգտագործել այրվող նյութեր (օրինակ՝ թեփ, տաշեղ): Հավաքելու ժամանակ օգտագործել պաշտպանության անհատական միջոցներ (խալաթ, ճուրակոշիկներ, ռետինե կամ պոլիէթիլենային ձեռնոցներ), շնչառական օրգանների պաշտպանության համար՝ PՄԴ-67 կամ PԿ-60M տեսակի A մակնիշի պատրոնով ունիվերսալ շնչադիմակներ, կամ արդյունաբերական հակագազ:

4. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՊԱՏԱՀԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

24. Միջոցն աչքերի մեջ լցվելու դեպքում դրանք առատորեն լվանալ հոսող ջրով և կաթեցնել նատրիումի սուլֆացիլի 20%-30% լուծույթ: Անհրաժեշտության դեպքում դիմել ակնաբույժի:

25. Ստամոքսի մեջ պատահական լցվելու դեպքում ստամոքսն առատորեն լվանալ սենյակային ջերմաստիճանի ջրով: Այնուհետև ընդունել մի քանի բաժակ ջուր ադսորբենտների ավելացմամբ (օրինակ՝ ակտիվացված ածուխի 10-15 մանրացված հաբ մեկ բաժակ ջրին): Անհրաժեշտության դեպքում դիմել բժշկի:

5. ՓՈԽԱԴՐՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ

26. Միջոցը փոխադրվում է վերգետնյա տրանսպորտի ծածկ ունեցող տրանսպորտի բոլոր տեսակներով՝ վտանգավոր բեռների (իզոպրոպիլային սպիրտի) փոխադրման կանոնների համաձայն, որոնք գործում են տրանսպորտի այդ տեսակների վրա և երաշխավորում են միջոցի և տարողության անվնասությունը: Տուփը մակնշում են համաձային 19433-88 ԳՕՍ-ի՝ նշելով վտանգավորության 3-րդ դասը (դյուրավառ հեղուկ):

27. Միջոցը պահպանում են արտադրողի սերտ փակված տարայի մեջ, դեղամիջոցներից առանձին, երեխաների համար անհասանելի տեղերում, օդափոխվող ծածկած պահեստային սենքերում, +5°C-ից մինչև +30°C

ջերմաստիճանում, արևի ուղիղ ճառագայթներից, տաքացուցիչ սարքերից և բաց կրակից հեռու:

6. ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱ-ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԱՆԱԼԻՏԻԿ ՄԵԹՈԴՆԵՐ

28. Որակի ցուցանիշներով միջոցը պետք է համապատասխանի սույն հրահանգի աղյուսակ 1-ում ներկայացված նորմաներին:

Աղյուսակ 1

	Հսկվող ցուցանիշներ	Նորմա
1	Արտաքին տեսք, գույն և	Թափանցիկ կարմրա-նարնջագույն հեղուկ
2	Հոտ	Յուրահատուկ
3	Իզոպրոպիլային սպիրտի զանգվածային բաժինը, %, սահմաններում	69,0 ± 2,0
4	Դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդի զանգվածային բաժինը, %, սահմաններում	0,22 ± 0,02

29. **Արտաքին տեսքը** որոշվում է ակնադիտորեն անցողիկ լույսի տակ: Դրա համար 30-32 մմ ներքին տրամագծով անգույն ապակուց փորձանոթի մեջ լցնում են միջոցը մինչև կեսը և դիտում են արտացոլված կամ անցնող լույսի տակ:

30. **Հոտը** որոշում են օրգանոլեպտիկ մեթոդով:

31. **Իզոպրոպիլային սպիրտի զանգվածային բաժնի որոշում:** Իզոպրոպիլային սպիրտի զանգվածային բաժնի որոշումն իրականացնում են գազահեղուկային քրոմատոգրաֆիայի մեթոդով՝ ներքին էտալոնի կիրառմամբ:

1) Սարքեր, ռեակտիվներ, սպասք.

ա. Քրոմատոգրաֆ՝ բոցա-իոնիզացնող դետեկտորով,

բ. Քրոմատոգրաֆիկ սյունակ չժանգոտվող պողպատից 2 մ երկարությամբ, ներքին տրամագիծը 3 մմ,

գ. Սորբենտ՝ պոլիսորբ-1, մասնիկների չափսերը 0,16-0,20 մմ,

դ. Գազ-կրիչ՝ ազոտ ըստ ԳՕՍՏ 9293-74 -ի, հատուկ մաքրության կամ 1-ին սորտի բարձր մաքրության, հելիում ըստ ՏՈՒ 51-940-80 -ի, մաքրված Ա կամ Բ մակնիշի,

ե. Խտացրած օդ բալոնային կամ կոմպրեսորից,

զ. Տեխնիկական ջրածին ըստ ԳՕՍՏ 3022-80 -ի,

է. Իզոպրոպիլային սպիրտ քրոմատոգրաֆիայի համար, քիմիական մաքուր (այսուհետ՝ ք.մ.), ՏՈՒ 6-09-4522-77,

ը. Նյութ-էտալոն՝ տրետ-բուֆիլային սպիրտ քրոմատոգրաֆիայի համար ըստ ՏՈՒ 6-09-4297-83,

թ. Մետաղական չափիչ քանոն ըստ ԳՕՍՏ 427 0-250 մմ սանդղակի միջակայքով և 1 մմ բաժանման արժեքով,

ժ. Չափիչ խոշորացույց ըստ ԳՕՍՏ 25706-83 կամ չափիչ մանրադիտակ,

ի. Ինտեգրատոր,

լ. Կշեռք ВРЛ-200, կշռման թույլատրելի սխալ մինչև $50 \pm 0,0005$ գր, սանդղակ ($50 - 200$) $\pm 0,001$ գր ըստ ԳՕՍՏ 24104-88,

խ. Բաժակիկ կշռման համար СВ-19/9 ըստ ԳՕՍՏ 25336-82,

ծ. ՄԱՊ տեսակի միկրոներարկիչ, 1 կամ 10 մմ³ տարողությամբ ըստ ՏՈՒ 2.833.106-89:

2) Նախապատրաստում հետազոտությանը.

ա) Սյունակի նախապատրաստում:

Սորբենտով լցված սյունակը տեղադրում են քրոմատոգրաֆի թերմոստատի մեջ և, առանց դետեկտորին միացնելու, փչում են գազ-կրիչով 30 ± 5 սմ³/րոպե արագությամբ ջերմաստիճանի ծրագրավորմամբ 50°C -ից մինչև 190°C , այնուհետև $190 \pm 3^\circ\text{C}$ դեպքում այնքան ժամանակ, մինչև սահմանվի կայուն զրոյական գիծ սարքի առավելագույն զգայունության ժամանակ: Քրոմատոգրաֆի դուրս բերումն

աշխատանքային ռեժիմին իրականացվում է սարքի հրահանգին համապատասխան:

բ) Քրոմատոգրաֆի աստիճանանշում: Սարքն աստիճանանշում են ըստ 3 արհեստական խառնուրդների, որոնց բաղադրությունը ներկայացված է Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Բաղադրիչի անվանում	Բաղադրիչի զանգվածը արհեստական խառնուրդում, գր		
	1	2	3
Իզոպրոպիլային սպիրտ	0,73	0,75	0,77
Տրետբութիլային սպիրտ	0,75	0,75	0,75
Ջուր	0,27	0,25	0,23

Խառնուրդները հանգամանորեն խառնում են: Յուրաքանչյուր խառնուրդի բաղադրիչների կշռման արդյունքները գրանցում են գրամներով մինչև չորրորդ տասնորդական նիշ ճշգրտությամբ: Յուրաքանչյուր արհեստական խառնուրդ քրոմատոգրաֆիայի են ենթարկում 3 անգամից ոչ պակաս սույն հրահանգի 31 կետի 2-րդ ենթակետի գ) ենթակետով սահմանված հետազոտության իրականացման պայմանների:

Աստիճանանշումային գործակիցը (K) հաշվարկում են բանաձևով.

$$K = (m_i \times S_{tun}) / (m_{tun} \times S_i),$$

որտեղ.

m_i – իզոպրոպիլային սպիրտի զանգվածն է արհեստական խառնուրդի մեջ, գ,

m_{tun} – նյութ-էտալոնի զանգված, գ,

S_i և S_{tun} – իզոպրոպիլային սպիրտի և նյութ-էտալոնի կոնկրետ որոշման ժամանակ գազաթի մակերես, մմ²:

Արդյունքները կլորացնում են մինչև երկրորդ տասնորդական նշանը:

Որպես իզոպրոպիլային սպիրտի աստիճանանշումային գործակից (K_i) ընդունում են բոլոր որոշումների միջին թվաբանականը, որոնց միջև բացարձակ տարբերությունները չեն գերազանցում թույլատրելի տարբերությունը, որը հավասար է 0.04%: Աստիճանանշումային գործակիցների որոշման թույլատրելի հարաբերական գումարային շեղումը կազմում է $\pm 2\%$ ՝ $p=0.95$ վստահելիության հավանականության դեպքում:

Քրոմատոգրաֆի աստիճանանշումն անհրաժեշտ է իրականացնել ոչ ուշ, քան 400 հետազոտությունից հետո:

3) Հետազոտության իրականացում: Կշռված բաժակիկի մեջ դոզավորում են 1 գ հետազոտվող պատրաստուկ, փակում են կափարիչով և կշռում: Այնուհետև դոզավորում են 0,75 գ տրետբութիլային սպիրտ, փակում են կափարիչով և նորից կշռում: Կշռման արդյունքները գրամներով գրանցում են մինչև չորրորդ տասնորդական նիշի ճշգրտությամբ: Բաժակիկի պարունակությունը հանգամանորեն խառնում և քրոմատոգրաֆում են:

Հետազոտության իրականացման պայմաններ.

ա) գազ-կրիչի ծախս՝ (20 ± 5) սմ³/րոպե,

բ) ջրածնի ծախս՝ (30 ± 3) սմ³/րոպե,

գ) օդի ծախս՝ (300 ± 20) սմ³/րոպե,

դ) գոլորշացուցիչի ջերմաստիճանը՝ $(250 \pm 10)^\circ\text{C}$,

ե) գծապատկերային ժապավենի արագություն՝ 240 մմ/ժամ,

զ) ներմուծվող նմուշի ծավալ՝ 1 մմ³,

է) սյունյակի թերմոստատի ջերմաստիճան՝ $(110 \pm 3)^\circ\text{C}$:

4) Արդյունքների մշակում: Գազաթի մակերեսը չափում են ինտեգրատորով կամ հաշվարկում են բոլորի կողմից ընդունված մեթոդով:

Իզոպրոպիլային սպիրտի զանգվածային բաժինը X , % հաշվում են բանաձևով.

$$X = (K_i \times S_i \times m_{\text{էտ}} \times 100) / (S_{\text{էտ}} \times m),$$

K_i – իզոպրոպիլային սպիրտի աստիճանանշումային գործակից,

S_i և $S_{t_{\text{տ}}}$ – հետազոտվող պատրաստուկում իզոպրոպիլային սպիրտի և նյութ-էտալոնի գազաթի մակերես, մմ²:

m և $m_{t_{\text{տ}}}$ – հետազոտվող պատրաստուկի զանգված և նյութ-էտալոնի զանգված, գ:

Որպես հետազոտության արդյունք ընդունում են երկու զուգահեռ որոշումների արդյունքների միջին թվաբանականը, որոնց միջև բացարձակ տարբերությունները չեն գերազանցում թույլատրելի տարբերությունը, որը հավասար է 0,8%: Հետազոտության արդյունքների թույլատրելի հարաբերական գումարային շեղումը կազմում է $\pm 7\%$ ՝ $p=0,95$ վստահելիության հավանականության դեպքում:

32. Դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդի զանգվածային բաժնի որոշում:

1) Սարքավորում, ռեակտիվներ, լուծույթներ.

ա. Լաբորատոր կշեռք ընդհանուր նշանակության 2-րդ դասի ճշգրտության կշռման առավելագույն սահմանը 200 գ՝ ըստ ԳՕՍՏ 24104-88,

բ. քյուրետ 1-1-2-25-0.1 ըստ ԳՕՍՏ 29251-91,

գ. կոլբա կոնաձև KH-1-50 ըստ ԳՕՍՏ 25336-82 հղկված խցանով,

դ. կաթոցիկներ 4(5)-1-1, 2-1-5 ըստ ԳՕՍՏ 20292-74,

ե. գլաններ 1-25, 1-50, 1-100 ըստ ԳՕՍՏ 1770-74,

զ. նատրիումի լաուրիլսուլֆատ (դոդեցիլսուլֆատ) ըստ ՏՈՒ 6-09-64-75,

է. ցետիլպիրիդինիումի քլորիդ 1-ջրային հիմնական նյութի 99,0% ոչ պակաս պարունակությամբ «Մերկ» (Գերմանիա) ընկերության արտադրության կամ նմանատիպ որակավորման ռեակտիվ,

ը. ինդիկատոր էոզին-մեթիլենային կապույտ (ըստ Մայ-Գրյունվալդի), մաքուր մակնիշի, ըստ ТУ МЗ 34-51,

թ. քլորոֆորմ ըստ ԳՕՍՏ 20015-88,

ժ. նատրիումի ծծմբաթթու, քիմիական մաքուր (այսուհետ՝ ք.մ.) կամ մաքուր հետազոտության համար (այսուհետ՝ մ.հ.հ.) մակնիշի, ըստ ԳՕՍՏ 4166-76,

ի. նատրիումի ածխաթթու ք.մ. կամ մ.հ.հ. մակնիշի, ըստ ԳՕՍՏ 83-79,

լ. կալիումի քլորիդ, ք.մ. կամ մ.հ.հ. մակնիշի, ըստ ԳՕՍ 4234-77,

խ. թորած ջուր ըստ ԳՕՍ 6709-72:

2) Նախապատրաստում հետազոտությանը:

ա) Նատրիումի լաուրիլսուլֆատի 0.005Ն ջրային լուծույթի նախապատրաստում:

0.150 գ նատրիումի լաուրիլսուլֆատ լուծում են թորած ջրում 100 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ՝ ծավալը թորած ջրով հասցնելով մինչև գծանիշը:

բ) Չոր ինդիկատորային խառնուրդի նախապատրաստում: Ինդիկատոր էոզին-մեթիլենային կապույտը խառնում են կալիումի քլորիդի հետ 1:100 հարաբերությամբ և մանրակրկիտ տրորում հախճապակյա հավանգի մեջ:

գ) Ցետիլպիրիդինիումի քլորիդի 0,005Ն ջրային լուծույթի նախապատրաստում: 0.179 գ ցետիլպիրիդինիումի քլորիդ լուծում են թորած ջրում 100 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ՝ ծավալը թորած ջրով հասցնելով մինչև գծանիշ:

դ) Կարբոնատա-սուլֆատային բուֆերային լուծույթի նախապատրաստում: pH 11 -ով կարբոնատա-սուլֆատային բուֆերային լուծույթ պատրաստում են, լուծելով 100 գ ծծմբաթթու նատրիում և 10 գ ածխաթթու նատրիում թորած ջրում 1 դմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ՝ ծավալը թորած ջրով հասցնելով մինչև գծանիշ:

ե) Նատրիումի լաուրիլսուլֆատի լուծույթի շտկման գործակցի որոշում: Նատրիումի լաուրիլսուլֆատի լուծույթի շտկիչ գործակիցը որոշում են ցետիլպիրիդինիումի քլորիդի լուծույթի 0.005Ն նատրիումի լաուրիլսուլֆատի լուծույթով երկփուլ տիտրմամբ: 50 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ 10 սմ³ ցետիլպիրիդինիումի քլորիդի լուծույթին ավելացնում են 10 սմ³ քլորոֆորմ, ներմուծում են 30-50 մգ չոր ինդիկատորային խառնուրդ և ավելացնում 5 սմ³ բուֆերային լուծույթ: Կոլբան փակում են խցանով և թափահարում լուծույթը: Ցետիլպիրիդինիումի քլորիդի լուծույթը տիտրում են նատրիումի լաուրիլսուլֆատի լուծույթով: Տիտրանտի հերթական չափաբաժնի ավելացումից հետո լուծույթը կոլբայում թափահարում են: Տիտրման ավարտին քլորոֆորմային շերտի վարդագույն գունավորումը փոխվում է կապույտի: Նատրիումի լաուրիլսուլֆատի լուծույթի K շտկիչ գործակցի արժեքը որոշում են բանաձևով.

$$K = V_{3\gamma} / V_{L\cup} ,$$

որտեղ.

$V_{\text{ՅՊ}}$ – ցետիլալիդիդինիումի քլորիդի 0,005Ն լուծույթի ծավալ, սմ³,

V_{LU} – տիտրման գնացած նատրիումի լաուրիլսուլֆատի 0,005Ն լուծույթի ծավալ, սմ³:

3) Հետազոտության իրականացում: Հետազոտվող միջոցի 1,5-2,0 գ զանգվածով կշռուկ, վերցված մինչև 0,0002 գ ճշգրտությամբ, քանակապես տեղափոխում են 100 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ և ծավալը թորած ջրով հասցնում մինչև գծանիշ: Հղկված խցանով 50 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի կամ գլանի մեջ լցնում են 10 սմ³ ստացված «Աստրադեզ-ՕՊ» միջոցի լուծույթ, 10 սմ³ քլորոֆորմ, 30-50 մգ չոր ինդիկատորային խառնուրդ և ավելացնում են 5 սմ³ բուֆերային լուծույթ: Կոլբան փակում են խցանով և թափահարում լուծույթը: Ստացված երկֆազային համակարգը տիտրում են նատրիումի լաուրիլսուլֆատի լուծույթով: Տիտրանտի հերթական չափաբաժնի ավելացումից հետո լուծույթը կոլբայում թափահարում են: Տիտրման ավարտին քլորոֆորմային շերտի վարդագույն գունավորումը փոխվում է կապույտի:

4) Արդյունքների մշակում: Դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդի զանգվածային բաժինը (X_1), արտահայտված տոկոսներով, հաշվարկում են բանաձևով.

$$X_1 = (0,001775 \times V \times K \times V_1 \times 100) / (m \times V_2),$$

որտեղ.

0,001775- դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդի զանգված, որը համապատասխանում 1 սմ³ հստակ $C(C_{12}H_{25}SO_4Na)=0.005$ մոլ/դմ³ (0.005Ն) խտության նատրիումի լաուրիլսուլֆատի լուծույթին, գ,

V – $C(C_{12}H_{25}SO_4Na)=0.005$ մոլ/դմ³ (0.005Ն) խտության նատրիումի լաուրիլսուլֆատի լուծույթի ծավալ,

K – $C(C_{12}H_{25}SO_4Na)=0.005$ մոլ/դմ³ (0.005Ն) խտության նատրիումի լաուրիլսուլֆատի լուծույթի շտկիչ գործակից,

m – հետազոտվող նմուշի ծավալ, գ,

V_1 – ծավալ, որի մեջ լուծված է «Աստրադեզ-ՕՊ» միջոցի կշռուկը, հավասար 100 սմ³,

V_2 – տիտրման համար վերցված հետազոտվող լուծույթի ալիկվոտայի ծավալ (100 սմ³):

Որպես հետազոտության արդյունք ընդունում են երկու զուգահեռ որոշումների արդյունքների միջին թվաբանականը, որոնց միջև բացարձակ տարբերությունները չեն գերազանցում թույլատրելի տարբերությունը, որը հավասար է 0,5%:

Հետազոտության արդյունքների թույլատրելի հարաբերական գումարային շեղումը կազմում է $\pm 3\%$, $p=0,95$ վստահելիության հավանականության դեպքում:

Հետազոտության արդյունքը կլորացնում են մինչև ստորակետից հետո առաջին տասնորդական նշանը: